



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301թ. Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

14 հուլիսի 2016թ. № 01/3089-96


Ձեռն.՝ 2016-07-12 №01/14.2/2534-16

Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման և զարգացման նախարար Դ.Լոբյանին

Հարգելի պարոն Լոբյան

Խնդրվում է հիմք ընդունել մեր 2016 թվականի մայիսի 20-ի N01/2231-16 գրությամբ
«տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացված, "Բաց
կառավարման գործընկերություն" Հայաստանի Հանրապետության երկրորդ
գործողությունների ծրագրի 6-րդ և 11-րդ կետերի կատարման վերաբերյալ ՀՀ Սյունիքի
մարզի 20 հազարից ավելի բնակչություն ունեցող Կապան և Գորիս համայնքների
ղեկավարներից ստացված տեղեկատվությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Ս.ԽԱԶԱՏԻՅԱՆ

Կատարող՝ Ս.Ավետիսյան
Հեռ.՝ (0285)27397
Էլ-հասցե՝ syunik.tim@mta.gov.am

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

ՀՀ մարզպետներին

Խնդրում եմ Ձեր իրավասությունների մասով տրամադրել
տեղեկատվություն՝ գրություններում (կցվում են) ներկայացված
կետերի վերաբերյալ:

Ժամկետ՝ 1 օր:

Առդիր՝ 2 էջ:



Դ. ԼՈՔՅԱՆ

N _____

“ ___ “ _____ 2016 թ.

Կապարող՝ Գարեգին Մանուկյան
Քարտուղարություն
Հեռ.՝ 010-511-385



ԲՆՃՈՐՄԱՏԻԱՅԻ ԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
 ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
 Հեռ. 56 03 60, 091 435136 է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
 FREEDOM OF INFORMATION CENTER NGO
 1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.07.2016թ
 287-9-ի

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
 նախարար պարոն Դավիթ Լոքյանին

Տեղեկատվության ստանալու հարցում



Հարգելի պարոն Լոքյան,


Տեղեկացնում եմ Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u/files/file/commitments_OGP_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ: Առնչվող անցկացման համար խնդրում եմ տրամադրել Գործողությունների ծրագրի տասնմեկերորդ հանձնարարության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 20.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար ապահովվել է արդյոք ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները անցանց հեռարձակելու տեխնիկաառարկավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար միջոցները: Եթե այո, խնդրում եմ նշել յուրաքանչյուր համայնքի համար ֆինանսական միջոցների աղբյուրները և կերպով գումարների չափերը:
2. Խնդրում եմ տրամադրել յուրաքանչյուր համայնքի համար ձեռք բերված տեխնիկաառարկավորումների ցանկը և կայքերի պատրաստման ծառայությունների տեսակները:
3. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 20.000 և ավելի բնակչություն ունեցող քանի՞ և ո՞ր համայնքներում են ստեղծվել համացանցային կայքեր, քանի՞ սն են վերազինվել: Եվ արդյո՞ք ապահովվում է դրանց բարմացումը: Խնդրում եմ տրամադրել դրանց հղումները:
4. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ, համաձայն ԲԿԳ 11-րդ պարտավորության, համայնքների համապատասխան աշխատակիցների համար քանի՞ դասընթաց է կազմակերպվել: Խնդրում եմ տրամադրել մանրամասն տեղեկություն դասընթացների վերաբերյալ համայնք, վերապատրաստվողի հաստիքը, օրը, թեման:
5. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ապահովվա՞ծ են արդյոք բոլոր 20.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների անցանց հեռարձակումը:
6. Խնդրում եմ ներկայացնել նաև պարտավորության լիարժեք իրականացմանը խոչընդոտող խնդիրները և դրանց վերացման հնարավոր ժամկետներն ու ուղղված քայլերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ
 Լիանա Դոդոյան
 ԻՄԿ նախագահ





ԲՆՏՈՐՄԱՑՄԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
 22, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
 Հեռ. 56 03 60, 091 435136 է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
 FREEDOM OF INFORMATION CENTER NGO
 1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.07.2016թ
 288-1-ի

ՀՀ տարածքային կառավարման և
 զարգացման նախարար
 պարոն Դավիթ Լոքյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Լոքյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Բնֆորմացիայի ազատության կենտրոնի հասարակական կազմակերպությունն իրականացնում է Քաղ կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u/files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:
 Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի վեցերորդ համաձևառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ քանի՞ համայնքում է ներդրվել Համայնքային միկրոհարցումների ծրագիրը:
2. Խնդրում ենք ներկայացնել գործընթացին առընչվող փաստաթղթերը՝ համայնքների հետ փոխհամաձայնության հուշագրեր, ավագանու որոշումներ կամ այլ:
3. Հանձնառությամբ նախատեսված 10 համայնքներում Ծրագրի ներդրման համար որքա՞ն գումար է նախատեսված և ի՞նչ միջոցներից /պետական բյուջե, դրամաշնորհներ կամ այլ/:
4. Որտե՞ղ են հրապարակվել SMS հարցումների բոլոր արդյունքները:
5. Խնդրում ենք ներկայացնել Հանձնառության ամբողջական իրականացման ընթացքում առաջացած խնդիրները, դրանց վերացմանն ուղղված քայլերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան արվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ
 Լիանա Դոյրոյան
 ԻԱԿ նախագահ

